# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 մարտի 2019 թ.
№ 4 (1038)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

## Գարուն է գալիս

Ձմեռը հալվել դարձել է առու,
Դարձել է առու, դարձել է վտակ,
Արաքսի հունով նա գնում է հեռու,
Գնում է, լցվում է ծովը անհատակ:
Հոգնած թևերը քսելով ամպին,
Կրծքին դեռ խոնավ ծվենը նրա,
Արագիլն իջել Արաքսի ափին՝
Հանգստանում է մի ոտքի վրա:

Երկինք ու երկիր մեզ ձայն են տալիս,
Դռները բացեք, գարուն է գալիս...
Դռները բացեք, դռները բացեք, գարուն է գալիս,
Գարուն է գալիս...

Աղբյուրն աղբյուրին իր գիրկն է կանչում,
Իրար են փարվում հովերն արթնացած,
Ծաղկունքից արբած բնությունն է շնչում,
Քանդում է մեղուն ժիր ակնամոմը թաց:
Հողն է մայրության հրճվանքից դողում,
Թող որ հավիտյան միշտ ազատ մնա,
Թող որ ոչ մի ծիլ չմնա հողում,
Ոչ մի բույն հավքի թափուր չմնա:

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Խորհրդի նիստում քննարկեցին բուհի 2018 թվականի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հաշվետվությունը: Պրոռեկտոր Արա Երեմյանը ներկայացրեց ծրագրի իրավական և մեթոդաբանական հիմքերը՝ հանգամանորեն խոսելով ուսումնական ծրագրերի մշակման, ուսանողների գնահատման հաշվետվողականության և թափանցիկության, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության խթանման գործիքակազմերի մասին:

Ռազմավարության հիմքում դրված նպատակներն էին հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կրճատումը, բուհում մատուցվող հանրային ծառայությունների որակի բարձրացումը, սոցիալական արդարության ընկալման բարելավումը, բուհի մրցունակության և գրավչության ամրապնդումը և այլն:

Խոսելով հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների մասին՝ պրոռեկտորը կանգ առավ բուհի կառավարման, վարչական, հասարակական մարմինների, ինչպես նաև դասախոսների և ուսանողների դերի վրա, որոնց անմիջական գործունեությամբ է պայմանավորված կոռուպցիոն ռիսկերի բացառումը, հավելելով, որ դրան կնպաստի ֆինանսական բոլոր գործառույթների համար էլեկտրոնային համակարգի ստեղծումը:

Պրոռեկտորը տեղեկացրեց, որ բուհի 2016-2020 թ.թ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված 2018 թ. գործողությունների կատարման պլանի իրականացման հարցը քննարկվել է կառավարման համապատասխան մակարդակներում:

➢2

## ՄԱՏՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ

Բնությունը կնոջն ասել է՝ եղիր իմայիչ, եթե կարող ես, իմաստուն, եթե ուզում ես, բայց շրջահայաց դու պետք է լինես բոլոր դեպքերում:

📖

Միայն կինը կարող է ժամանակավորապես կանգնեցնել ժամանակը:

📖

Իսկական կինն ունենում է երեք տարիք՝ երիտասարդություն, երկրորդ երիտասարդություն և հավերժ երիտասարդություն:

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ

➢1 Ելույթներով հանդես եկան Խորհրդի անդամները, որոնք կարևորեցին ուսանողների շրջանում հարցումներ անցկացնելու անհրաժեշտությունը՝ նախանշված բացթողումները բարելավելու քայլերը հասկանալու համար:

Առաջիկայում նախատեսվում է բուհում ներդնել «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական խնդիրները» թեմայով դասընթաց:

ՀՀ ԿԳ փոխնախարար, Խորհրդի անդամ Արևիկ Անափիոսյանը անհրաժեշտ համարեց Խորհրդի նիստերի պարբերաբար անցկացումը և մանկավարժության ոլորտում առկա խնդիրների բարձրաձայնումը:

Համգամանորեն քննարկվեց 2019 թվականի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը, որի շուրջ ծավալվեց ակտիվ և շահագրգիռ քննարկում:

Խորհուրդը որոշակի առաջարկությունների ներառմամբ հաստատեց ՀՊՄՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը, ինչպես նաև 2018 թվականի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման հաշվետվությունը:

# ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մարտի 14-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացվեց մամուլի ասուլիս-քննարկում, որի ընթացքում փիլիսոփա, ՀՊՄՀ դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը և փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ Հասմիկ Հովհաննիսյանը ներկայացրին ներկայումս աշխատաշուկայում տիրող իրավիճակի, պահանջարկ վայելող մասնագիտությունների մասին սոցիոլոգիական հետազոտության արդյունքները:

Հետազոտական աշխատանքի ղեկավարները և կամավորները սոցիոլոգիական հարցումներն իրականացրել էին 2014 թվականի ՀՊՄՀ երեք՝ Բանասիրական, Սկզբնական կրթության, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետների շրջանավարտների շրջանում:

ՀՊՄՀ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը չափազանց կարևորեց նման սոցիոլոգիական հետազոտությունների անհրաժեշտությունը, որովհետև բուհի ռազմավարության իրականացման գործում անհրաժեշտ է իմանալ համալսարանի շրջանավարտների զբաղվածության ոլորտները, աշխատաշուկայում նրանց պահանջված լինելու աստիճանը՝ թույլ ու ռիսկային կողմերի, նաև առավելությունների բացահայտման միջոցով տեսնելու բուհի շրջանավարտի դիմագիծը աշխատաշուկայում, որով կարող են պայմանավորվել համալսարանի հետագա քայլերը:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներն իրականացվել էին հստակ հարցադրումների հիման վրա, այն է՝ որքանո՞վ է տվյալ մասնագիտությունը պահանջարկված աշխատաշուկայում, ի՞նչ կարգավիճակ ունեն բուհի շրջանավարտները աշխատաշուկայում, ինչպիսի՞ն են աշխատաշուկայում ներգրավման տեմպերը, նպաստող և խոչընդոտող գործոնները որո՞նք են աշխատաշուկայի գրավիչ և մտահոգիչ կողմերը, ինչպե՞ս են գնահատում բուհում ստացած իրենց կրթությունը աշխատաշուկայում առաջին քայլերն անող երիտասարդ մասնագետները:

Թիմային աշխատանքից ստացված արդյունքները և հարցախույզի պատասխաններն առավել կնպատակաուղղեն բուհական կրթության բարեփոխումների իրականացման աշխատանքները՝ համալսարան-շրջանավարտ հետադարձ կապի միջոցով արձանագրելով փաստերն ու արդյունավետության ուղիները:

Հովհաննես Հովհաննիսյանը հանգամանորեն ներկայացրեց ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի բազային ֆինանսավորմամբ և կամավորների ներգրավմամբ իրականացված ուսումնասիրության ընդհանուր պատկերը, թիմի եզրակացություններն ու առաջարկությունները:

Բանախոսը մատնանշեց երիտասարդ մասնագետների չաշխատելու հիմնական պատճառները, աշխատանքի որոնման արդյունքներն ու զբաղվածությունն ըստ մասնագիտական կրթության և այլ ոլորտների, 2013-2014 ուստարվա շրջանավարտների աշխատանքի անցնելու դինամիկան մինչև 2018 թվականի առաջին կիսամյակը:

Հետազոտողներն անդրադարձել էին նաև Երևանում և այլ բնակավայրերում աշխատանք գտած շրջանավարտների միջին աշխատավարձերին՝ արձանագրելով, որ մարզերում դրանք մայրաքաղաքի համեմատությամբ բավականին ցածր են:

Հարցվողները նաև համարձակ դիտարկումներ էին արել որոշ հարցերի վերաբերյալ. 55,3 տոկոսի համար բուհում ստացած գիտելիքները բավարար են լիարժեք մասնագետ դառնալու համար, 12,6 տոկոսը բացասական պատասխան էր տվել: Այս և այլ հարցերի վերաբերյալ պատասխաններով բուհի շրջանավարտների գնահատմամբ ուրվագծվել է նաև բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման համակարգի դրական ու թերի կողմերը:

Այսպիսով, զբաղվածության և գործազրկության ցուցանիշների վերհանման և գնահատման արդյունքում թիմը հանգել է որոշակի եզրակացությունների. աշխատաշուկայում շրջանավարտների ներգրավման տեմպերն ու հնարավորությունները գնալով ավելի ու ավելի են պայմանավորվում երիտասարդ մասնագետների գիտելիքների մակարդակով, անհրաժեշտ են առավել գործուն մեխանիզմներ բուհերի կառավարման խորհուրդներում գործատուների շահագրգիռ ներկայությունն ապահովելու համար, պետք է նեծացնել ու առավել արդյունավետ դարձնել բուհերում գործող կարիերայի զարգացման կենտրոնների գործառույթները և այլն:

Բանախոսների կարծիքով ճիշտ կլինի նաև օրենսդրորեն հստակություն մտցնել աշխատաշուկայում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճան ունեցողների կարգավիճակների վերաբերյալ:

Քննարկում-ասուլիսն ավարտվեց կամավորներին շնորհավորագրերի հանձնմամբ, նաև հարց ու պատասխանով: Ներկաները համոզված էին՝ սոցիոլոգիական հետազոտությունը ուսանողների համար որոշակի փորձառություն էր և ուղենիշ առաջիկա նոր ուսումնասիրությունների համար:

***Սիլվա ԱՍՐՅԱՆ***

# ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ

Պատմության և իրավագիտության ֆակուլտետում մարտի 14-ը նշանավորվեց 1848 թվականի հունգարական հեղափոխության հոբելյանի առթիվ կազմակերպված միջոցառմամբ, որին մասնակցում էին ֆակուլտետում սովորող հունգար ուսանողները, հայ-հունգարական բարեկամություն ՀԿ-ի նախագահ Անահիտ Սիմոնյանը, տարբեր կուրսերի ուսանողներ:

Հունգար ուսանողները ներկայացրին պատմական այդ կարևոր իրադարձությանը վերաբերող ակնարկ, որը թարգմանում էր Մանկավարժական համալսարանի հունգար ուսանող Պետրոսը. ի դեպ, դա նրա հայերեն առաջին թարգմանությունն էր:

«Պատմության և իրավագիտության ֆակուլտետում արդեն մեկ կիսամյակ է ուսանում են հունգար 5 ուսանողներ: Տարբեր միջոցառումների և ձեռնարկների կազմակերպման միջոցով մենք հնարավորություն ենք ընձեռում, որ օտարերկրացի ուսանողները կարողանան ներկայացնել իրենց երկրի պատմությունն ու մշակույթը: Նպատակը միմյանց ճանաչելն ու նաև նրանց ինտեգրելն է ուսանողական առօրյայում և հայերի շրջանում: Մարտի 15-ին լրանում է 1848 թվականի հունգարական հեղափոխության հոբելյանը, որին մասնակցել են բազմաթիվ հունգարահայեր և մեծ ներդրում ունեցել կազմակերպական գործին: Երեք հայտնի գեներալներից երկուսը հայ են եղել և 13 գնդակահարվածներից

են: Այդ իրադարձությունները հայտնի են միայն պատմաբաններին, ապագա պատմաբանների համար սա կրկնակի կարևոր է, քանի որ ներկայացվում է հունգարների կողմից, որոնք ներկայացնում են հայ համայնքի ներդրումը իրենց երկրի զարգացման գործին»,-ասաց Էդգար Հովհաննիսյանը:

Սա հայ-հունգարական բարեկամությունը կամրջող կարևոր հանդիպում էր, որ ոգեշնչեց հայ և հունգար ուսանողներին:

Կարինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

*էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հանրային խորհրդի էկոլոգիայի հանձնաժողովի նախագահ*

# Որտեղ կանայք ավելի շատ են, այնտեղ կոռուպցիայի մակարդակը ցածր է...

***- Տիկին Դանիելյան, նոր Հայաստանում փոխվե՞լ է վերաբերմունքը բնապահպանական խնդիրների հանդեպ:***

- Հույս ունեմ, որ իրավիճակը կփոխվի: Փաստորեն անկախության տարիներին մենք շատ վատ պահեցինք մեզ բնության նկատմամբ. իհարկե, այստեղ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ էին, միջազգային ֆինանսական կառույցների ղեկավարությամբ իրականացված ռեֆորմները բացասական դեր կատարեցին: Մենք խոսում էինք այն ժամանակ, բայց մեզ ոչ ոք չէր լսում և կարծես նպատակ կար քանդել տնտեսությունն այնպես, որ մնա միայն ընդերքի օգտագործումը: Մենք հավաքել էինք Հայաստանի փորձագետներին, մշակել էինք կայուն զարգացման հայեցակարգը, որտեղ գրել էինք՝ սխալ է մոտեցումը, երբ դու ապավինում ես շուկայի ինքնակարգավորման հնարավորությանը և կառավարության և պետության դերը թերագնահատում ես:

***- Ձեր առաջարկները, բնականաբար, չընդունվեցին:***

- Մեր առաջարկները չընդունվեցին, բայց ես մասնակցեցի Նյու Յորքում ընթացող գլխավոր ասամբլեայի գիտաժողովին, ուր քննարկվում էր, թե ինչու ֆինանսական ճգնաժամ է տեղի ունենում, և եզրակացությունը հենց դա էր, որ շատ սխալ է նեոլիբերալ մոտեցումը. ինքնակառավարվող շուկան իր էությամբ հակասոցիալական, հակաէկոլոգիական մոտեցումներ կարող է դրսևորել և շատ վնասակար է, պետության կարգավորող դերը միշտ պետք է լինի: Եվ գլխավոր ասամբլեայի 63-րդ նստաշրջանի որոշում կա, որ մեր ռեֆորմները սխալ են ընթացել: Երբ Սովետական Միությունը քայքայվեց, միջազգային ֆինանսական կառույցները Համաշխարհային բանկի հետ մշակեցին այդ նեոլիբերալ մոտեցումը և պետություններին, այդ թվում և մեզ, ֆինանսական աջակցություն ցուցաբերեցին: Եվ արդյունքում մեզ այնպիսի վնասներ տվեցին՝ բաց հանքերով, պոչամբարներով, առողջապահական խիստ ռիսկերով, որ ես հիմա դժվարանում եմ պատկերացնել, թե քայլ առ քայլ ինչպես պետք է դուրս գալ ստեղծված իրավիճակից:

Այդ ռեֆորմները չընդունեցին Չինաստանը, Բելառուսը և մասնավորապես Ղազախստանը: Հիմա նրանք ավելի լավ վիճակում են:

***- Փորձե՞լ եք դիմել նոր իշխանությանը:***

- Ես իմ նախորդ հարցազրույցում էլ եմ ասել, որ նախկին իշխանությունները չեն ընդունել մեր մտահոգությունները. ՀՀ առողջապահության նախարարությունը հերքել է, որ կան այդպիսի ռիսկեր ու վտանգներ, նոր իշխանության պայմաններում նորից դիմել ենք. միայն Գյուղատնտեսության նախարարությունն է ընդունել, որ աղտոտված է շրջակա միջավայրը, հետևաբար և սնունդը:

ՄԱԿ-ի պատվերով զեկույցի արդյունքում պարզ դարձավ հանքարդյունաբերության ահավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, որն էլ իր հերթին՝ մարդու առողջության վրա:

Մենք դիմեցինք կառավարությանը երեք առաջարկներով. նախ պետք է Հայաստանի առջնահերթություններից հանել հանքարդյունաբերությունը, և հետո՝ ինչպե՞ս կարելի է զարգացնել հանքարդյունաբերությունը՝ զուգահեռ՝ գյուղատնտեսությունը և տուրիզմը: Մի փոքր տարածության վրա դրանք անհամատեղելի են:

***- Դուք ընտրվել եք հանրային խորհրդի էկոլոգիական հանձնաժողովի նախագահ:***

- Այո, Հանրային խորհրդում ստեղծվել է էկոլոգիական հանձնաժողով, որի նախագահ ընտրվել եմ

ես: Նախկինում չի եղել նման հանձնաժողով: Արդեն մի քանի հարց քննարկել ենք: Հանձնաժողովի ուղղություններից մեկը հանքարդյունաբերության ազդեցությունն է առողջության վրա: Մենք դիմել ենք Առողջապահության նախարարությանը և նամակի պատասխանն արդեն կա:

***- Թերևս բավականին հստակ քայլեր են պետք վերոհիշյալ խնդիրների լուծման համար:***

- Այո: Եվ շատ դժվար լուծելի խնդիր է, բայց անհրաժեշտություն է: Գիտե՞ք, ամեն ինչ կոծկելը ոչինչ չի տալիս: Իմ ուժերը չէին բավարարում, որ բացահայտեմ, բայց մեր ուսումնասիրությունից հետո մեր կառավարությանը խնդիրը չէր մտահոգում: Մեր փոխարեն Չեխիայի կառավարությունն անհանգստացել է Հայաստանի իրավիճակով: Չեխերը ուսումնասիրություններ են արել ու ահավոր վիճակագրության հանգել: Ուսումնասիրել են Լոռու տարածաշրջանը և իրենց ստացած տվյալները շատ ավելի մտահոգիչ են, քան այն, ինչ ես եմ գրել:

Հիմա ամեն ինչ կախված է Առողջապահության նախարարության հետ մեր բանակցություններից: Ցավոք նախորդին էլ էինք դիմել նման հարցով, և նա ասել էր, որ դա քաղաքական հարց է...

***- Իսկ ի՞նչ կասեք Սևանա լճի խնդիրների մասին: Հանրային խորհրդի նորաստեղծ հանձնաժողովը կկարողանա ինչ-որ չափով շտկել իրավիճակը:***

- 2013 թվականից սկսած կառավարությունը ջրառ է կատարում Սևանից, իսկ մեր ուսումնասիրությունները, և ոչ միայն մեր, ցույց են տվել, թե Սևանի ջրի որակը ինչքան է կախված մակարդակից. լճի մակարդակը բարձրացնում ես, և ինքնամաքրման գործունեությունն ակտիվանում է, ջրի մակարդակն իջեցնում ես՝ որակն ընկնում է: Ես խորը համոզմունք ունեմ, որ անցյալ տարի ջրիմուռների ակտիվ աճը, ճահճացման գործընթացը լրացուցիչ 100 մլն ջրառի արդյունքն էր: Այժմ տեխնիկական հանձնաժողով է ստեղծված, որն ուսումնասիրում է ոռոգման ցանցը. պատկերացնո՞ւմ եք՝ մենք ավելի շատ կորուստ ենք տալիս, քան վերցնում ենք Սևանից: Ես մասնակցում եմ այդ աշխատանքներին և սարսափում եմ ոռոգման ցանցի ներկա վիճակից, թեև ժամանակին մեծ գումարներ են ծախսվել: Կառավարության հնգամյա պլանում նախատեսված է, բայց մենք հորդորում ենք այժմվանից սկսել ակտիվ աշխատանքները: Այն, ինչ նախատեսված է վերցնել Սևանից, դա չի խախտում բալանսը, իսկ երբ լրացուցիչ ջուր են վերցնում, դա արդեն խփում է նաև որակին: Պետք է հնարավորինս քիչ ջուր վերցնել Սևանից:

Համենայնդեպս ինչ-որ գործընթացներ գնում են, և ես հույս ունեմ, որ հանրային խորհրդի միջոցով հնարավոր կլինի ինչ-որ հարցեր լուծել:

***- Ի՞նչ կասեք հանքարդյունաբերության և արտանետումների մասին:***

- Ալավերդու կոմբինատը պաշտոնական թույլտվություն ուներ նորմային գերազանցող արտանետումներով արտադրություն կազմակերպել, սակայն պայմանով, որ տարիների ընթացքում բարելավվի աշխատանքի գործընթացը: Տարիների ընթացքում մեծ քանակով արտանետումները եղել են, բայց ոչինչ չի արվել արտադրության անվտանգության ուղղությամբ: Ամերիկյան համալսարանն է շատ ուսումնասիրություններ արել. առողջապահական տվյալները ահավոր են Ալավերդիում. շարունակաբար աճել է քաղցկեղից մահացությունների թիվը, նոր ծնվածների մոտ շեղումները շատ են: Պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ քաղցկեղից հիվանդությունների քանակով առաջինը Լոռին է, երկրորդը՝ Սյունիքը, այնուհետև՝ մեծ տարբերությամբ Երևանը: ՄԱԿ-ը փորձել է ներկայացնել իրավիճակն ու տվյալները, բայց մեր կառավարությունից ասել են, որ ինչ էլ ներկայացնեք՝ չենք ընդունելու: Այժմ չեխական կողմի մեկուկես տարվա ուսումնասիրությունները տարածվել են աշխարհով մեկ: ՀՀ առողջապահության նախարարությունը համաշխարհային առողջապահական կազմակերպությանը սխալ տվյալներ է տվել տարիներ շարունակ: Քաղցկեղից մահացությունների թվով Հայաստանը առաջինն է կամ երկրորդը: Եթե բնակչության թիվը ավելի իրական ներկայացվի, ոչ թե 3,5 միլիոն, մենք միշտ առաջինը կլինենք: Եթե շուտափույթ քայլեր չձեռնարկվեն, իրավիճակն ավելի կբարդանա, որովհետև դա ինքնասպանության ճանապարհ է:

***- Ձեր կարծիքով կանայք շա՞տ են շահագրգիռ ու ակտիվ այդ խնդիրների քննարկման հարցում:***

- Վերջերս շատ հետաքրքիր ուսումնասիրության արդյունքներ հրապարակեցին. այն ոլորտներում, որտեղ կանայք ավելի շատ են աշխատում կամ ղեկավարում, այնտեղ կոռուպցիայի մակարդակը ցածր է: Եթե կինը մտնում է քաղաքականության մեջ, դա ոչ թե նրա համար է, որ անուն ձեռք բերի, այլ նրա համար, որ այդ խնդիրը լուծելու ցանկություն ունի: Իր էության ձգտումն է դա մեծամասամբ: Այո, կանայք բավականին ակտիվ են հատկապես հասարակական խորհուրդների գործընթացների մեջ, հասարակական կազմակերպություններում:

***- Դրսից անընդհատ ասում են, որ կանանց թիվը պետք է մեծացնել քաղաքական գործընթացներում: Մեզանում կանայք իսկապես ակտիվ են և արհեստական ջանքերի կարիք չկա:***

- Ես այնքան էլ համաձայն չեմ դրա հետ, թե կանանց թիվը պետք է մեծացնել: Վերջերս մի ուսումնասիրությունից պարզվեց, որ Հայաստանում բարձրագույն կրթությամբ կանայք 60 տոկոս են կազմում, տղամարդիկ՝ 40: Սա մտահոգիչ է: Տարբեր բուհերում դասավանդել եմ և նկատել եմ, որ ուսանողները հիմնականում աղջիկներն են, և գիտության նկատմամբ հետաքրքրությունը նույնպես աղջիկների մոտ բարձր է: Ես չեմ կարծում որ տղամարդը իշխող դերում պետք է լինի, բայց բոլոր դեպքերում տղամարդը չպետք է կորցնի իր դերը:

*Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ*

# «ԼԵԶՎԻ ՈԼՈՐՏԸ ԱՄԵՆԱԶԳԱՅՈՒՆՆ Է»,

## -ԱՍՈՒՄ Է ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆԸ

Սկզբնական կրթության ֆակուլտետի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը հերթական վարպետաց դասն էր կազմակերպել, որը վարում էր ՀՀ ԿԳՆ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը:

Ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը ուսանողներով լեփ-լեցուն դահլիճին ներկայացրեց ՀՊՄՀ շրջանավարտ, Լեզվի կոմիտեի և Մանկավարժական համալսարանի Խորհրդի նախագահ, դասագրքերի հեղինակ Դավիթ Գյուրջինյանին:

Իբրև մուտք՝ Դ. Գյուրջինյանը համառոտ ներկայացրեց իր կենսագրությունը, ասաց, որ միշտ հանդիպում է երիտասարդության հետ, որ չկորցնի ժամանակի զգացողությունը:

Խոսելով լեզվական քաղաքականությունից՝ նա փաստեց, որ Լեզվի կոմիտեն լեզուն քարոզելու, հայերենը կանոնակարգելու, հայերենին առնչվող ամեն ինչի հանդեպ իր վերաբերմունքը դրսևորելու, այլ ոչ թե պատժելու համար է: Ըստ նրա՝ «լեզվի ոլորտը ամենազգայուն ոլորտն է», և հայերեն խոսող ամեն մարդ չպետք է կարծի, որ ինքն ամեն ինչ կարող է անել լեզվի հետ:

Մյուս զգայուն ոլորտը մանկավարժության ոլորտն է, որտեղ «ամեն աշակերտ, ամեն ուսանող մի աշխարհ է և նրանցից յուրաքանչյուրի հետ հաղորդակցվելն անհատական, առանձին գործ է»:

Թեև Դավիթ Գյուրջինյանի օրը հագեցած է բազմաբնույթ աշխատանքներով՝ Լեզվի կոմիտե, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան, ՀՊՄՀ Խորհրդի նախագահի պարտականություններ, այնուամենայնիվ, երեկոյան հասցնում է կարդալ, զբաղվել իր գիտական աշխատանքով, որովհետև գտնում է, որ «գիտելիքի և այլ նվաճած բարձունքները երբեք չպետք է զիջել...»:

Վարպետաց դասին ներկա էին Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի 4-րդ և մագիստատուրայի 1-2-րդ կուրսերի ուսանողները, ինչպես նաև դասախոսներ: Հանդիպումը շարունակվեց հարց ու պատասխանով: Ապագա դասվարները և դասախոսներն իրենց հետաքրքրող մի շարք հարցեր ուղղեցին Դ. Գյուրջինյանին, նաև կիսեցին իրենց մտահոգությունները:

Հարցերը վերաբերում էին Մայրենի լեզվի դասագրքերին, Այբբենարաններին ու դրանց ընտրությանը, էլեկտրոնային դասագրքերի հնարավոր կիրառությանը, դասագրքերը նաև կրթական հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար դյուրին դարձնելուն, դասագրքերի ընտրության հարցում ծնողական համայնքների անհանգստությանը, այբուբենի որոշ տառերի միասնականացմանը, ավարտական թեստերի նմուշ-օրինակներին, հեռուստառադիոեթերի լեզվին, հապավումների ստեղծմանն ու կիրառությանը և այլ հարցերի:

ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական կոմիտեի նախագահը հանգամանորեն խոսեց բոլոր հարցերի մասին՝ որոշ դեպքերում աշխատանքների սխալ կազմակերպումը կապելով նախկին իշխանությունների անարդարության ու կոռուպցիոն դրսևորումների հետ, բացառելով մենաշնորհը դասագրքերի ստեղծման և ուսուցիչների կողմից ընտրության գործում, միաժամանակ հույս հայտնելով, որ շատ հարցերում շտկումներն անխուսափելի են:

Ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց հետաքրքիր հանդիպման համար և վստահեցրեց, որ օրվա խորհուրդը և առհասարակ հարցերի լուծման ճանապարհը համագործակցությունն է: Դեկանն իր խոսքն ամփոփեց մի իմաստնությամբ. «Եթե ուզում ես արագ գնալ՝ քայլիր մենակ , եթե ուզում ես հեռուն գնալ՝ քայլիր միասին»:

*Սիլվա ԱՍՐՅԱՆ*

## Սերոբ ԽԱՉԱՏՐՅԱՆ

***ՀՊՄՀ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս, կրթության փորձագետ***

# «Կրթության համակարգի գլխավոր հիմնախնդիրը կրթության արժեզրկումն է»,

## -ասում է Սերոբ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

***- Պարոն Խաչատրյան, որո՞նք են Հայաստանի կրթական համակարգի առաջնահերթ հիմնախնդիրները:***

- Այս փուլում ամենամեծ խնդիրն այն է, որ մենք չենք քարտեզագրել մեր կրթության հիմնախնդիրները: Եղել են տարբեր քննարկումներ: Մի մասը նշում է, որ հիմնախնդիրը ծրագրերն ու դասագրքերն են, մյուսները նշում են, որ ուսուցիչների որակը բավարար չէ, երրորդներն ասում են, որ ֆինանսավորումը բավարար չէ: Իմ կարծիքն այն է, որ կրթության համակարգի գլխավոր հիմնախնդիրը կրթության արժեզրկումն է: Սովորելու ձգտումը նվազել է: Երեխաներին ավելի շատ հետաքրքրում են խաղերը, ֆիլմերը, սոցիալական ցանցերը, քան՝ սովորելը:

***- Գլոբալիզացիայի դրական և բացասական ազդեցությունը Հայաստանի կրթության համակարգի վրա:***

- Գլոբալիզացիայի շնորհիվ Հայաստանի աշակերտները, ուսանողները, ուսուցիչներն ու դասախոսները հնարավորություն են ստացել շփվելու այլ երկրների կրթական համակարգերի հետ: Այսօր մեր դպրոցներում, համալսարաններում սովորում են արտասահմանյան ուսանողներ: Մեր ուսանողներն են մեկնում այլ համալսարաններ: Գլոբալիզացիայի միջոցով մենք հնարավորություն ունենք համացանցի միջոցով հետևել կրթական համակարգի համաշխարհային գործընթացներին: Սա դրական ազդեցությունն է:

Բացասական ազդեցությունն այն է, որ մենք դարձել ենք ուղեղներ արտահանող երկիր: Գլոբալիզացիայի արդյունքում բազմաթիվ շնորհալի երիտասարդներ Հայաստանում կրթություն ստանալուց հետո մեկնում են արտերկիր և իրենց գիտելիքները ծառայեցնում այլ երկրների տնտեսության զարգացմանը:

***- Ի՞նչ կասեք ՀՀ ԿԳ նախարարության «Ուսուցիչ» ծրագրի մասին:***

- Ծրագրի մանրամասներին ծանոթ չեմ: Բայց կարծում եմ նման ծրագիր պետք է ունենանք: Երբ ուսումնասիրում ենք կրթության ոլորտում հաջողության հասած երկրների փորձը, նկատում ենք մեկ ընդհանրություն: Բոլոր այդ երկրներում կա մեծագույն հարգանք ուսուցիչների նկատմամբ: Հայաստանում, ցավոք, այդպես չէ: Ուսուցիչները ոչ միայն ցածր են վճարվում, այլև հաճախ հայտնվում են հանրային քննադատության ներքո: Սա ցանկալի միտում չէ, քանի որ երիտասարդները կարող է չցանկանան ուսուցիչ դառնալ: Շատ կարևոր է, որ «Ուսուցիչ» ծրագրի միջոցով նաև ձևակերպվեն ուսուցչին ներկայացվող պահանջները, սոցիալական պաշտպանության երաշխիքները:

***- Ինչպե՞ս են ազդում տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների վրա:***

- Կա տեսակետ, որ տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են փոխարինել ուսուցչին: Բայց այդպես չէ: Միշտ էլ մարդ-մարդ հարաբերությունը կարևորագույնն է լինելու դասավանդման գործընթացում: Եթե չկա լավ մանկավարժություն, տեխնոլոգիաները ոչինչ չեն կարող փոխել: Բայց եթե կա լավ մանկավարժություն, ապա տեխնոլոգիաները կարող են բազմապատկել այդ աշխատանքը:

***- Վերջին տարիներին հեշտացել է բուհեր ընդունվելը: Ինչպե՞ս է դա ազդում բուհական կրթության վրա:***

- Դա գլոբալ տենդենց է: Տարիներ առաջ համալսարանները սելեկտիվ ուսումնական հաստատություններ էին: Այսօր դրանք դարձել են զանգվածային հաստատություններ: 1991 թվականին Հայաստանում կար 14 բուհ և շուրջ 50 հազար ուսանող: Այսօր ունենք շուրջ 60 բուհ և 80 հազար ուսանող: Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանում դպրոցների շրջանավարտների թիվը կտրուկ նվազել է խորհրդային տարիներին համեմատ:

Բարձրագույն կրթության մասսայականացումը դժվարացնում է դասախոսի աշխատանքը: Եթե նախկինում լսարանում նստած ուսանողների մեծ մասը ուներ գիտելիքների հարուստ պաշար, ապա այսօր ուսանողների մի զգալի մասն ունի գիտելիքների ոչ բավարար պաշար: Նույն լսարանում նստած ուսանողների ակադեմիական մակարդակը շատ տարբեր է: Հետևաբար, դասախոսը պետք է կիրառի դասավանդման հետաքրքիր ու բազմազան մոտեցումներ, որպեսզի կարողանա մեծ մասին ներգրավել դասապրոցեսին: Բայց երկարաժամկետ առումով բարձրագույն կրթության մասսայականացումը դրական ազդեցություն է ունենալու մեր հասարակության զարգացման մակարդակի վրա:

***- Ի՞նչ կասեք կրթության ոլորտում կին ղեկավարների մասին:***

- Կանայք այսօր մեծամասնություն են մեր կրթական մակարդակում: Այդուհանդերձ, մենք աշխարհի այն եզակի երկրներից ենք, որտեղ դեռևս կրթության կին նախարար չի եղել: Բայց կանայք այսօր ներկայացված են ինչպես նախարարությունում, այնպես էլ հանրակրթության ոլորտում: Աճել է նաև կին ռեկտորների թիվը: Հուսով եմ, այս զարգացումները դրական կազդեն մեր կրթական համակարգի վրա:

*Զրույցը՝*
*Սիլվա ԱՍՐՅԱՆԻ*

# Եթե ուզում ենք փոխել կրթության ձևն ու որակը

Խոսելով Հայաստանում կրթության որակի և ընդհանրապես կրթության խնդիրների մասին՝ համարձակ կարող ենք ասել, որ եկել է իրական փոփոխությունների ժամանակը: Մինչև հիմա արված փոփոխությունները կատարվել են «սիրողական» և, կարելի է ասել, փորձնական մակարդակի վրա: Անընդհատ նոր բեռ է ավելացվել ինչպես դպրոցների, այնպես էլ դպրոցականների և նրանց ծնողների վրա՝ նոր առարկաների ուսուցում, բազմաթիվ մատյանների ու հաշվետվությունների լրացում, ուսման տևողության երկարացում և այլն: Ցավոք, բոլոր այս արհեստական փոփոխությունները որևէ ձևով չեն բարելավել ուսման գործընթացը, և ամեն ինչ մնացել է անփոփոխ:

Վերջերս վարչապետի հայտարարություններից մեկում հնչեց հետևյալ միտքը՝ եթե չունենանք լավ կրթական համակարգ, չենք կարող ունենալ լավ երկիր: Իսկ ի՞նչ արվեց, մեր՝ մանկավարժներիս կողմից, որ կարողանայինք, համագործակցաբար աշխատելով աշակերտի հետ, ուսումնառությունը դարձնել ավելի մատչելի, անհրաժեշտ և, վերջապես, հետաքրքիր:

Շատերին թերևս համարձակ թվա իմ այն միտքը, թե մեր կրթական համակարգը չի համապատասխանում այսօրվա պահանջներին, որը ձևավորվել է նախորդ դարում՝ խորհրդային տարիներին, և դեռ Կրուպսկայայի մշակմամբ:

«Time» ամսագրի կողմից աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդկանցից մեկը հայտարարված չին գործարար Ջեք Ման ասել է. «Եթե մենք չփոխենք ուսուցման ձևն ու սկզբունքները, հետո խնդիր կունենանք: Մենք չենք կարող մեր երեխաներին սովորեցնել մրցել մեքենաների հետ: Դրանք ավելի խելացի են»:

Սակայն միևնույն ժամանակ չպետք է մոռանանք նաև այն, որ այդ մեքենաները ստեղծողները, դրանց բազմազան ծրագրերի հեղինակները նույնպես մարդիկ են:

Չի կարելի չհամաձայնել Մայի այն մտքի հետ, որ երեխաների վրա պետք է ներդրումներ կատարել դեռ վաղ տարիքում՝ մանկապարտեզում, դպրոցում: Կարիք չկա երեխաներին սովորեցնել այն, ինչ կարող են անել համակարգիչները: Երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել լինել ստեղծագործ, անել այն, ինչ չեն կարող անել մեքենաները: Մենք պետք է մեր երեխաների մեջ սերմանենք հենց այդպիսի արժեքներ, սովորեցնենք անկախ մտածողություն, թիմային աշխատանք, հոգ տանել ուրիշների, շրջակա աշխարհի մասին: Անշուշտ, միայն գիտելիքով դա չենք կարող փոխանցել, և դա հրաշալի է. չէ՞ որ մեքենաներն ունեն միայն չիպեր, իսկ մարդիկ, ի տարբերություն մեքենաների, ունեն նաև սիրտ և զգայարաններ: Ուրեմն, կրկին անդրադառնանք ավանդական հարցերին. «Ի՞նչ անել, ինչպե՞ս հետաքրքրել աշակերտին, ինչի՞ց սկսել»:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է նախ բացատրական զրույց ունենալ երեխայի հետ: Հարկավոր է լինել պարզ, մատչելի, միևնույն ժամանակ և՛ ընկեր, և՛ առաջնորդ: Յուրաքանչյուր ուսուցիչ, ծնող, ով կապ ունի կրթության հետ, առնչվում է «սխալ է» կամ «ճիշտ է» մոտեցումներից մեկնումեկին, երեխային խրախուսելու, պատժելու, դասապատրաստման ուշադրությունների և նման կարգի այլ խնդիրների հետ: Բայց եկեք մի պահ մտածենք. արդյո՞ք երեխային դուր է գալիս միշտ նախատինքի արժանանալ, երբ փոխարենը կարող է գովեստի խոսքեր լսել: Իսկ որքա՞ն հաճելի կլիներ հաճախակի լսել գովասանք, սիրով և վստահությամբ ներշնչվել կրթության և գիտելիքի հանդեպ: Չէ՞ որ յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է, ունի անհատական արժանիքներ, ուժեղ և թույլ կողմեր, ինչը մենք շատ հաճախ չենք նկատում:

Ինչպե՞ս ճիշտ խրախուսել, գովել երեխային. այս հարցը շատ կարևոր է, քանի որ խրախուսանքը, գովասանքը կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Հոգեբանների կարծիքով չհիմնավորված գովասանքը գործում է թմրադեղի նման. երեխան սովորում է դրան, ծնողներից սպասում գովեստի, և նրա մեջ երբեմն անհիմն կերպով ձևավորվում է ուրիշներից իր առավել լինելու գիտակցությունը: Ավելի վտանգավոր է, երբ երեխային գովաբանում են մի բանի համար, որը նրա մոտ հեշտ է ստացվում, և նրան որպես օրինակ են բերում այն երեխաներին, ում մոտ նույնը ստացվում է դժվարությամբ և մեծ ջանքերի գնով: Երեխային պետք է խրախուսել անկեղծորեն, լուրջ և համոզիչ: Գովասանքն անհրաժեշտ է՝ երեխային ինքնավստահություն, եռանդ հաղորդելու, իր արածի հանդեպ նրա վստահությունը լրացնելու համար: Յուրաքանչյուր գովասանք որոշակի նպատակաուղղվածություն պետք է ունենա և երբեք չպետք է հնչի հենց այնպես կամ լինի ինքնանպատակ:

Անհրաժեշտ է հիշել, որ չի կարելի երեխային պախարակել, քննադատել. վիրավորել՝ համեմատելով մեկ այլ երեխայի հետ, քանի որ դա անդառնալի հետևանք կունենա անձի ձևավորման վրա: Հիշենք, որ մենք՝ մեծահասակներս, կոչված ենք օգնող, ուղղորդող լինելու, կյանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանելու, այլ ոչ թե հակառակը:

Հիշենք, որ աշխատելով ժամանակակից մտածող աշակերտի հետ՝ մենք պետք է հասկանանք, որ երեխաներին հրամայել անել այն, ինչը նրանց դուր չի գալիս, բացարձակապես անօգուտ գործ է: Հենց դրա համար էլ պետք է փորձենք սովորեցնել՝ կարևորելով նրանց անձը և նախասիրությունները:

Եթե ուզում ենք մեր երկրում փոխել կրթության ձևն ու որակը, ապա եկեք առաջինը սկսենք մեզանից. փոխենք մեր վերաբերմունքը դեպի շրջապատը (ինչի շնորհիվ կփոխվի նաև ինքը՝ շրջապատը), սիրով կատարենք մեր աշխատանքը, հաշվի նստենք մեր գլխավոր պատվիրատուի՝ հասարակության հետ, համագործակցենք սովորողի հետ, կրթությունը դարձնենք հետաքրքիր և արդիական, հաճախ խրախուսենք աշակերտին, ինքներս հավատով լցվենք դեպի ապագան և այդ հավատով լիցքավորենք նրան:

***Մելանյա ԳԵՂԱՄՅԱՆ***
***Ավետիսյան դպրոցի տնօրեն, Մ.գ.թ.***

# ՄԱՐԴՈՒ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՌԻՆՔՆՈՂ ԿԵՐՊԱՐԸ



Սեղանի վրա են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Յուրիկ Հայկազի Մուրադյանի հեղինակությամբ և համահեղինակությամբ լույս տեսած դպրոցական և բուհական աշխարհագրության դասագրքերը, մենագրությունները, ուսումնական ձեռնարկները: Վաստակաշատ գիտնականը 40 տարի աշխատում է ՀՊՄՀ-ում և գիտական մեծ ներդրում ունի աշխարհագրության դասավանդման բնագավառում: Միայն հրատարակված 12 դասագրքերի, մենագրությունների և ուսումնական ձեռնարկների ընդհանուր ծավալը կազմում է 4450 էջ կամ 285 տպագրական մամուլ, չհաշված հինգ տասնյակից ավելի հոդվածներն ու քարտեզները:

Յուրիկ Մուրադյանը 2005 թվականից Հայկական աշխարհագրական ընկերության փոխնախագահն է: 2006-2012 թթ. եղել է ՀՊՄՀ Պատմության և աշխարհագրության, այնուհետև Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետների դեկանի տեղակալ: Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտական նստաշրջաններում: Գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են բնական ռեսուրսների տնտեսական գնահատման, բնառեսուրսային շրջանացման, քաղաքակրթությունների աշխարհագրության, տարածաշրջանների և պետությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական աշխարհագրության հիմնահարցերին, աշխարհի գլոբալ հիմնախնդիրներին: Գիտական աշխատանքները հրատարակվել են Երևանում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Նովոսիբիրսկում, Թբիլիսիում, Օպոլեում (Լեհաստան), Վորոնեժում, Տոմսկում, Օրյոլում, Վենետիկում (Իտալիա) և այլ քաղաքներում:

ՀՀ անկախությունից հետո Յուրիկ Մուրադյանն ակտիվ մասնակցություն ունեցավ հայերեն լեզվով հրատարակվող դպրոցական աշխարհագրության առաջին դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների ստեղծման գործին: Դրանցից մի քանիսը ստեղծվել են առաջին անգամ: Առանձնահատուկ տեղ է գրավում նաև «Քաղաքակրթությունների աշխարհագրություն» բուհական դասագիրքը, որը նոր խոսք է աշխարհագրության մեջ: Աշխարհագրական մամուլը արձագանքել և դրվատանքի խոսքեր է գրել «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» (համահեղինակ՝ դոց. Մարիետա Մուրադյան) ուսումնական ձեռնարկի մասին:

Բուհական դասագրքերի, ձեռնարկների ու մենագրությունների շարադրանքը հստակ է, գիտական, հակիրճ ու մատչելի: Ժամանակագրական առումով ցանկը գլխավորում է «Արտասահմանյան երկրների տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» երկհատորյակը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև 2500 տերմիններից և հասկացություններից բաղկացած «Հասարակական աշխարհագրության հանրագիտական բառարանը»:

Ուշագրավ են Յուրիկ Մուրադյանի և Մարիետա Մուրադյանի համահեղինակությամբ շարադրված «Տարածաշրջանների և պետությունների սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» երկու հատորանոց «Ընդհանուր տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» բուհական դասագրքերը: Մեծ է այս դասընթացների աշխարհայացքային, համամշակութային, կրթադաստիարակչական և կիրառական նշանակությունը: Նրա լայն իմացությունն աշխարհը, առանձին տարածաշրջաններն ու պետությունները ճանաչելու, հասարակության տարածքային կազմակերպման, աշխարհաքաղաքականության, հասարակության և բնության փոխհարաբերության, բնօգտագործման և բնակչության, պետությունների արտաքին տնտեսական կապերի, մշակույթների և քաղաքակրթությունների շփման ու երկխոսության, զբոսաշրջության զարգացման և այլ հնարավորություններ է տալիս:

Յու. Մուրադյանն օժտված է դասախոսությունները գրագետ մատուցելու, հետաքրքիր դարձնելու անուրանալի ձիրքով, հմտությամբ, գեղագիտական ճաշակով, որոնք նա անկասկած ժառանգել է իր դասախոս Կամսար Ավետիսյանից, գիտական ղեկավար, ակադեմիկոս Լեմվել Վալեսյանից, պաշտպանական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Մաքսակովսկուց:

Նրա յուրաքանչյուր դասի «կարմիր թելը» հորդաբուխ գիտելիքի մատուցումն է, որի անսպառ պաշարի շնորհիվ ոչ միայն դասը հետաքրքիր ու գրավիչ է դառնում, այլև զարգանում է ուսանողի աշխարհագրական մտածողությունն ու ճաշակը: Ինքնատիպ է աշխարհագետ-մանկավարժի դասի մատուցման եղանակն ու մշակույթը, երբ ուսանողին սովորեցնում է մտածել: Գիտնականն աչքի է ընկնում նաև շահեկան մի այլ հատկությամբ. նա ասելիքը մշտապես համեմում է իմաստուն խոսքերով, առածներով, ասացվածքներով, նուրբ հումորով:

Չափազանց ուսանելի և անմնացորդ է այն նվիրումը, որով աշխարհագետ-մանկավարժը ծառայում է ընտրած մասնագիտությանը, և դժվար է ասել՝ Յու. Մուրադյա՞ննն է ավելի շատ շահել աշխարհագրությունից, թե՞ աշխարհագրությունը՝ Յու. Մուրադյանից: Նրա աշխատանքի ինքնատիպ ոճը լավագույնս խտացված է գիտնականի բազմաթիվ հոդվածների, քարտեզների, դպրոցական և բուհական աշխարհագրության դա-

➤6

# ՄԱՐԴՈՒ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆԻ...

➤5 սագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական գրությունների էջերում:

Ուզում եմ առանձնահատուկ ընդգծել սիրված դասախոսի անձնական այլ որակները՝ ազնվությունը, համեստությունը, ընկերասիրությունը, հումորի մշակույթը: Աշխարհագետ Յու. Մուրադյանը սիրահարված է իր հող ու ջրին, իր հայրենիքին, այդ են վկայում հայրենի բնության սիրահարի ոտքով ճանապարհորդությունները հանրապետությունով մեկ: Դեռ 1970-1980-ականներին հայկական ֆուտբոլի հիմնադիրներից ու վետերաններից մեկի՝ վաստակավոր ուսուցիչ Ցոլակ Հայկազյան (ցեն Ցոլակի) հետ Յու. Մուրադյանը քայլարշավ է իրականացրել ՀՀ տարբեր վայրերում՝ Սևանա լճի շուրջ, Եղեգնաձորից Մեղրի, Վանաձոր-Դիլիջան-Իջևան-Նոյեմբերյան-Ալավերդի-Ստեփանավան-Վանաձոր-Գյումրի-Աշոցք-Նիկոծմինդա-Գանձա երթուղիներով: Բայց ամենաերկարն ու հիշարժանը Երևան-Ստեփանակերտ (363 կմ) երթուղին էր՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին: Այն սկսվեց Ծիծեռնակաբերդի բարձունքից և 10 օր անց ավարտվեց Ստեփանակերտի քաղաքապետարանի մոտ:

Ահա պրոֆեսոր Յու Մուրադյանին ուղղված ուսանողական գնահատանքի խոսքերից պատառիկներ. «Հրաշալի մարդ, բանիմաց դասախոս և լավ ընկեր: Բառերն անգամ անկարող են բնութագրելու Ձեր վեհ կերպարը: Մեր շատ սիրելի պարոն Մուրադյան, տարեթիվը լոկ թիվ է, որը չի բնութագրում Ձեր առույգությունը, ուսանողներին և Ձեր աշխատանքին նվիրվածությունը: Դուք էտալոն եք բոլորիս համար: Հպարտանում ենք Ձեզանով»:

«Ահա զանգը հնչեց և լսարան է մտնում աշխարհագետ պարոն Մուրադյանն ու... սկսվում է զարմանահրաշ ճանապարհորդությունը. բոլորս սկսում ենք ճանաչել, հիանալ, բացահայտել, զգալ: Պրոֆեսոր Մուրադյանի դասերն ուղղակի դասախոսություն չեն, այլ արժեքավոր ու անմոռաց մտովի «ուղևորություններ»: Նա դարձել է լավագույն գիտնականի օրինակ մեզ համար: Հպարտ եմ, պատիվ ունեմ ճանաչել, լինել նրա ուսանողը...»:

«Յուրիկ Մուրադյանի մասին շատ բան կարելի է ասել, որ ազնիվ ընկեր է, հմուտ մանկավարժ, ակտիվ քաղաքացի, պրպտուն հետազոտող, օրինակելի ընտանեսեր...: 70-ամյակին մոտեցած մտավորականի առավել առարկայական դիմապատկեր-բնութագիրը ստեղծելու համար բառերից անցնենք գործերին: Դրանք Յու. Մուրադյանի բազմաթիվ գրքերն են, դասախոսական աշխատանքի երկար ու բեղմնավոր տարիները, ազնիվ ընթացքը: Թող այսուհետև ևս արգասաբեր ու խաղաղ լինի այդ ընթացքը». ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Դավիթ Գյուրջինյանի բնութագրումը առավել ամբողջական է դարձնում Յուրիկ Մուրադյան մարդու և գիտնականի պայծառ ու առինքնող կերպարը:

***Աշոտ ԽՈՅԵՑՅԱՆ***
***Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՀՈԲԵԼՅԱՆ

2019 թվականը հոբելյանական է Սամվել Հարությունյանի համար: Մարտի 5-ին լրացել է նրա ծննդյան 70 և աշխատանքային գործունեության 50-ամյակը: Պետք է բարձր գնահատել Սամվել Հարությունյանի մասնագիտական և մարդկային բարձր որակները, տարիների ընթացքում նրա կատարած աշխատանքը և ձեռքբերումները, խոնարհվել մանկավարժական գործում նրա ունեցած վաստակի առջև:

Դժվար է մի քանի նախադասությամբ ներկայացնել Սամվել Հարությունյանի աշխատանքային գործունեությունը: Նա հայազգի առաջին դոկտորն է «Երկրաչափություն և տոպոլոգիա» մասնագիտությամբ, նախկին ԽՍՀՄ առաջին քաղաքացին է, ում շնորհվել է Անասիլաոս արքայի միջազգային մրցանակը (2008 թ.), ԱՊՀ առաջին քաղաքացին է, ով ընտրվել է Սիցիլիայի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (2010 թ.): Միջազգային կարգի մրցավար է սեղանի թենիսից: Երկար տարիներ եղել է ազգային օլիմպիական կոմիտեի անդամ: 20 տարի է Հայկական մաթեմատիկական միության խորհրդի անդամ է: 1998 թվականից մինչև 2003 թվականը եղել է ՀՊՄՀ արտաքին կապերի և օտարերկրյա ուսանողների բաժնի վարիչ: 2008 թվականից մինչև 2016 թվականը ղեկավարել է հանրահաշվի և երկրաչափության ամբիոնը: Ունի բազմաթիվ հոդվածներ, բուհական և դպրոցական դասագրքեր:

Նա հոգատար է իր շրջապատի, գործընկերների հանդեպ, խորհուրդներով օգնում է բոլորին: Սամվել Հարությունյանը վայելում է թե՛ ուսանողների և թե՛ իր գործընկերների սերն ու հարգանքը: Մեր շնորհավորանքի, գովասանքի ու բարեմաղթանքի խոսքերն ենք ուղղում մեր գործընկերոջը՝ Սամվել Հարությունյանին, ցանկանում ենք նրան կյանք խաղաղ և աշխատանքի բեղուն ընթացք:

***Աղավնի ԳՐԻԳՈՐՅԱՆ***
***Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս***

# ՀԻՆԱՐԺԱՆ ՕՐ

Բանասիրական ֆակուլտետում տեղի ունեցավ մագիստրոսական կրթական ծրագրի հեռակա ուսուցման 3-րդ կուրսի 21 ուսանողի ավարտական պետական վկայականների հանձնման արարողությունը: Վկայականները հանձնեց հանձնաժողովի նախագահ Վիկտոր Կատվալյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը: Նա շնորհակալություն հայտնեց ուսանողներին՝ հարազատ ֆակուլտետին ցուցաբերած վստահության համար: Ամբիոնների վարիչները մանկավարժության մագիստրոսներին հորդորեցին շարունակել կրթական գործունեությունը՝ իրենց առջև ունենալով մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի վառ օրինակը:

Սփյուռքահայ ուսանողուհի Կարինե Քեսապլյանը շնորհակալություն հայտնեց պրոֆեսորադասախոսական կազմին իրենց նվիրումի և հոգատարության համար:

Երեք մագիստրոսներ ստացան կարմիր դիպլոմներ:

Միջոցառմանը մասնակցում էին նաև ուսանողների ծնողներ, հարազատներ:

# Հայրենիքից հեռու, հայրենիքի համար

Մարտի 10-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում միջին և ավագ դասարանների աշակերտների համար կազմակերպվել էր միջոցառում նախկին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցչության մշտական ներկայացուցիչ Էդուարդ Ասատուրի Հայկազյանի, ինչպես նաև հայտնի խորհրդային և ռուս քիմիկոս, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վիլեն Վաղարշի Ազատյանի հետ:

Նախ հյուրերը ծանոթացան դպրոցին, նրա գործունեությանը, դիտեցին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից «Վերածնունդ» դպրոցի 30-ամյակին նվիրված ֆիլմը, այնուհետև դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի ողջույնի խոսքին հետևեցին ելույթները:

Էդ. Հայկազյանը դպրոցին նվիրեց արխիվային նյութեր՝ «Սովետական Հայաստան» (3.09.1989 թ., հոդված «Հին հուշարձանի նոր կյանքը») և «Ավանգարդ» (09.07.1989 թ., հոդված «Մոսկվա, հայկական նրբանցք #2») պարբերականները, որոնցում նկարագրված էր, թե ինչպես է ստեղծվել «Վերածնունդ» դպրոցը, և ինչպես էր Մոսկվայի հայ համայնքը ոգևորությամբ ընդունեցին այդ լուրը: Էդ. Հայկազյանը մանրամասն և հետևողականորեն պատմեց պատմական փաստերի և արխիվային նյութերի հիման վրա դեռևս 1988 թվականի հոկտեմբերի 2-ից նախկին Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի շենքում՝ այժմ ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից գործող «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի հիմնադրման և բացման մասին: Կարևոր է ընդգծել, որ վերջին խորհրդային տասնամյակում Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունը տասը տարի գլխավորած էդ. Հայկազյանը անձամբ ակտիվ մասնակցություն է ունեցել դպրոցի հիմնադրման գործում՝ Լազարյան ինստիտուտի կրթա-լուսավորչական ավանդույթների վերածննդի նպատակով:

Էդ. Հայկազյանը նաև պատմեց, որ դպրոցը հնարավոր դարձավ հիմնադրել Հայաստանի ԽՍՀ Լուսավորության մինիստրության աջակցությամբ և Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ: Այդ մասին գրված է նաև Է. Հայկազյանի կողմից 2016 թվականին հրատարակված «Իմ անմոռանալի 20-րդ դար» ինքնակենսագրական գրքում, որտեղ հեղինակը նշում է, թե ինչ մեծ ոգևորությամբ հայրենակիցներն ընդունեցին դպրոցի հիմնումը և հետագա գործունեությունը:

Էդ. Հայկազյանը նվիրեց նաև «Երեսուն տարի անց» ակնարկը, որտեղ մանրամասն նկարագրվում է դպրոցի ստեղծման գործընթացը:

Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ֆիզիկական քիմիայի մասնագետ, բազմաթիվ գիտական հրապարակումների և գյուտերի հեղինակ Վիլեն Ազատյանը ներկայացրեց կիրակնօրյա դպրոցի հետ ծանոթությունից ստացած տպավորությունները՝ խորհրդանշական զուգահեռ անցկացնելով «Վերածնունդ» դպրոցի անցած ուղու և հայտնի նկարիչ Գրիգոր Խանջյանի «Այբուբեն», «Ավարայրի ճակատամարտ», «Վերածնունդ» կտավների միջև:

Հանդիպումն ավարտվեց դպրոցի սաների գրական-երաժշտական և պարային գեղեցիկ կատարումներով:

## ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

# ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Ես Մարինե Սահրադյանն եմ, ծնվել եմ Արագածավան գյուղում, որտեղ էլ ստացել եմ միջնակարգ կրթությունս: Դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետ:

Դեռ դպրոցական տարիներից ոգեշնչված էի, տարված հայրենասիրության գաղափարներով, և կարծես օրեցօր նպատակ էր դառնում սեփական հայրենիքի, ժողովրդի պատմությունը լավագույնս ուսումնասիրելու գաղափարը:

Ընդունվելով պատմության և իրավագիտության ֆակուլտետ՝ իմ առջև մի նոր՝ հստակ խնդիր ու նպատակ դրեցի. պետք է լինել լավագույնը ընտրած մասնագիտության մեջ:

Առաջին իսկ օրից ջերմ միջավայր, պրոֆեսորադասախոսական հոյակապ կազմ, ովքեր ևս իրենց գիտելիքներով, հայրենասիրական բարձր մղումներով ինձ ուղղորդեցին դեպի մի ճանապարհ, որը լինելու էր իմ մասնագիտական ձեռքբերումների սկիզբը:

Ուսանողական կառույցների միջոցով շատ ավելի արագ ինտեգրվեցի ուսանողական կյանքին՝ ունենալով բավականին հետաքրքիր և բովանդակալից օրեր՝ լի գեղեցիկ հիշողություններով:

Այժմ սովորում եմ մագիստրատուրայի 2-րդ կուրսում, և այն ուղին, որն անցել եմ և շարունակում եմ անցնել, եղել է վերելքներով, ձեռքբերումներով և, ինչու չէ, երբեմն նաև հիասթափություններով: Դժվարին և մեծ ջանքեր էին պահանջվում ունենալու այն, ինչ մի օր ինձ համար երազանք էր:

Ուսանողական տարիներին մասնակցել եմ մի շարք միջոցառումների, եղել եմ ուսանողական կառույցների անդամ: Ուսանողական խորհրդի շրջանակներում եղել եմ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի սոցիալական հանձնաժողովի նախագահը, այնուհետև հետաքրքրությունս ավելի մեծացավ՝ Ուսանողական գիտական ընկերության կազմում իմ գործունեությունը սկսեցի գիտության ասպարեզում: Հետո նշանակվեցի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ, ապա՝ համալսարանի ՈՒԳԸ նախագահ:

Մասնակցել եմ մի շարք բուհական, միջբուհական հանրապետական և միջազգահին ծրագրերի: 2016 թվականին «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում մեկնել եմ Ֆինլանդիա, այնուհետ էրազմուս + ծրագրով մեկ կիսամյակ սովորել եմ Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում, որտեղ և նույն տարին բացվեց Հայագիտության ամբիոն: Էրազմուս + ծրագիրն ամբողջ կյանքի համար ձեռքբերված փորձ էր, որը պետք է ստանա յուրաքանչյուր մարդ, ով ձգտում է գերազանցության: Սա կատարյալ ուղի է՝ բացահայտելու նոր մշակույթներ, ավանդույթներ և սովորելու նոր լեզուներ: Այս ծրագրի շնորհիվ հնարավորություն ունեցա ծանոթանալու հունգարական մշակույթին, կենսակերպին և պատմության հետաքրքրական էջերին: Չորս ամսվա ընթացքում կարողացա ընդլայնել ոչ միայն գիտելիքներս և լեզվական հմտություններս, այլև ավելի համարձակ և ինքնուրույն լինել նախաձեռնություններս ներկայացնելու մեջ:

Հունգարիայում գտնվելու ընթացքում կարողացա ուսման հետ մեկտեղ ճամփորդել եվրոպական տարբեր երկրներ, ինչի շնորհիվ ձեռք բերեցի ընկերներ, նոր ծանոթություններ աշխարհի տարբեր ծայրերից: Իմ հաջողությունները շարունակվեցին իմ աշխատանքի և համառ պայքարի շնորհիվ. 2018 թվականին ճանաչվեցի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Լավագույն ուսանող». դա անչափ կարևոր, լուրջ ձեռքբերում էր և պարտավորեցնող հաղթանակ: Ունենալով բազում հաղթանակներ, թերևս ավելի քան ոգեշնչող և խոստումնալից հաղթանակ էր, երբ ՀՀ Հայագիտության ոլորտում ճանաչվեցի «Լավագույն ուսանող»: Մի հաղթանակ, որն ինձ համար վերջնական նպատակակետ չէ, այլ մի նոր սկիզբ, մի նոր ճանապարհ դեպի նոր ձեռքբերումներ, վերելքներ, մասնագիտական հաջողություններ:

Կարծում եմ յուրաքանչյուր մարդ պե՛տք է զարգացնի իր գիտելիքները, անդադար զբաղվի ինքնազարգացմամբ, հստակ գիտակցի իր անելիքները, քանի որ ամուր պետության հիմքը կրթված և հաստատակամ հասարակությունն է:

Երազանքից դեպի նպատակ տանող ճանապարհին, որտեղ լինում են և՛ ոգևորություններ, և՛ հիասթափություններ, յուրաքանչյուր ոք պետք է լցված լինի հաղթանակի և նվաճումների ձեռքբերման գիտակցումով, և եթե կա մնայուն արժեքներ՝ թողնելու ցանկություն, հաստատապես հնարավոր է հաղթահարել ցանկացած խոչընդոտ և դրանով իսկ թեկուզ մի փոքր ներդրում ունենալ երկրի և հասարակության կայացման գործում:

***Մարինե ՍԱՀՐԱԴՅԱՆ***
***Պատմության և իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրս***

# Յուրաքանչյուր ոք պետք է հասկանա՝ սոցիալական աշխատանքը մասնագիտություն է

Մանկավարժական համալսարանում մարտի 19-ին կազմակերպվեց «Սոցիալական աշխատանքը փոխակերպվող հասարակությունում. զարգացման հեռանկարները» թեմայով կոնֆերանս՝ նվիրված սոցիալական աշխատանքի համաշխարհային օրվան: Այն նախաձեռնել էին Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը և «Սոցիալական աշխատող. աջակցության կենտրոն» մարդասիրական հասարակական կազմակերպությունը:

Կոնֆերանսին մասնակցում էին ոլորտի ղեկավարներ ու մասնագետներ, հանրապետության տարբեր բուհերի ու դպրոցների, հասարակական կազմակերպությունների շահագրգիռ ներկայացուցիչներ:

Ներկաներին տոնի առթիվ շնորհավորեցին և իրենց դժվարին աշխատանքում հաջողություններ մաղթեցին ՀՊՄՀ պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Պետրոսյանը, ամբիոնի վարիչ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Սահակյանը:

Վերջիններս վստահեցրին, որ ապագա սոցիալական աշխատողները չպետք է բավարարվեն գնահատական ու դիպլոմ ստանալով, այլ պիտի գիտակցեն իրենց մասնագիտական առաքելությունը և լինեն հումանիստ:

Ինչպես նշեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական աջակցության վարչության պետ Աստղիկ Մինասյանը՝ «սոցիալական աշխատողները ծանր ոլորտի աշխատողներ են, աղքատ, ռեսուրս չունեցող, բայց լուսավոր մարդիկ, որոնք աշխատում են սոցիալական բեռի տակ կքած մարդկանց հետ: Սոցիալական աշխատողների նպատակը մարդկանց այս վիճակից հանելն է կամ կանխարգելելը»:

Ա. Մինասյանը թվարկեց ծայրահեղ աղքատ համարվող մարդկանց (բնակարանային պայմաններից, կրթություն ստանալու հնարավորությունից զուրկ, աշխատաշուկայից դուրս մնացած, սոցիալական ծայրահեղ պայմաններում հայտնված) հիմնական խնդիրները, և փաստեց, որ նման մարդկանց հետ աշխատողների համար ամենակարևորը գիտելիք ունենալն է և պրոֆեսիոնալիզմը: Բանախոսն անդրադարձավ հանրապետությունում սոցիալական աշխատողներ պատրաստող փոքր թվով բուհերին և տարբեր ոլորտներում նաև սոցիալական աշխատանք իրականացնող բաժիններին (Ոստիկանություն, Արդարադատության նախարարություն, դպրոցներ):

Առաջիկայում կքննարկվեն սոցիալական աշխատողի մասին օրենքների դրույթները և ամեն ինչ կարվի, որ յուրաքանչյուր մարդ հասկանա՝ սոցիալական աշխատանքը մասնագիտություն է:

Աստղիկ Մինասյանը բարձրաձայնեց, որ սոցիալական աշխատանքի ճանապարհը դժվար է. հաջողությունների կողքին լինում են նաև սայթաքումներ, և կարևորն այն է, որ սոցիալական վատ պայմաններում ապրող մարդկանց հետ աշխատող մարդիկ լինեն բարի և ունենան բավարարվածության զգացում, որ նրանց աշխատանքային հաջողությունները նաև ոլորտի հաջողությունների գրավականն են:

Ոլորտի նպատակների ու հիմնախնդիրների մասին հանգամանորեն խոսեց «Սոցիալական աշխատող. աջակցության կենտրոն» մարդասիրական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ, Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանք բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Հասմիկ Բունիաթյանը: Սոցիալական աշխատողի համաշխարհային օրը նա համարեց մարդկային արժեքների վերահաստատման օր, իսկ սոցիալական աշխատողին՝ բարության աջակից, լույսի և արժեքների վերարթնացման արարող:

Այո, կարիքը չի սպասում, երբ խնդիրները բազմազան են, իսկ ջանքերը արդյունք կտան միասին գործելու դեպքում:

Հ. Բունիաթյանը ամփոփ ներկայացրեց «Սոցիալական աշխատանքի» մասնագիտական կրթության կազմակերպման գործընթացում առկա հնարավոր խնդիրների և բացթողումների բացահայտմանն ու վերհանմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները:

Մյուս բոլոր զեկուցումները վերաբերում էին սոցիալական աշխատողի գործունեության և սոցիալական աշխատանքի տարբեր կողմերին՝ սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեության առանձնահատկություններին, սոցիալական աշխատանքի դերին առողջապահության ոլորտում, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, հանրապետությունում ոլորտի գիտական զարգացման հնարավորություններին և այլ հարցերի:

Կոնֆերանսը մասնագիտական և շահագրգիռ միջավայրում անցկացված արդյունավետ քննարկումներն ամփոփեց վկայականների հանձնմամբ, «Սոցիալական աշխատողի ձայնը» երգի պրեմիերայով և օրվա խորհրդին համահունչ բարեմաղթանքներով:

***Սիլվա ԱՍՐՅԱՆ***

# Հեպաքրքիր բանավեճ

Բանավեճի ակումբը շարունակում է իր ակտիվ գործունեությունը: Այս անգամ ուշադրության կենտրոնում էր վերջերս մեծ քննարկումների առարկա դարձած հանրակրթական դպրոցում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման հարցը: Մարտի 13-ին Բանավեճի ակումբի նախաձեռնությամբ տեղի ունեցավ բանավեճ՝ «Քրիստոնեական կրթությունը ՀՀ դպրոցներում արդարացված է» թեմայով, որին մասնակցում էին կենտրոնական ուսանողական խորհրդի անդամները, ինչպես նաև ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը: Թեև բանավեճի ընթացքը բավականին հագեցած էր իրարամերժ տեսակետներով ու կարծիքներով, սակայն առկա էր ջերմ և ընկերական մթնոլորտ:

Խաղի վերջում չնչին միավորների տարբերությամբ հաղթող ճանաչվեց «կողմ» թիմը:

# ՄԵԼԲՈՒՐՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԳՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մարտի 19-ին կայացավ Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցի 1-ին ,Ծիծեռնակներե դասարանի «Հրաժեշտ այբբենարանին» միջոցառումը: Երգ, պար, բանաստեղծություններ՝ ոչ միայն 1-ին դասարանցիների մասնակցությամբ. տառաճանաչության տոնին մասնակցում էին նաև նրանց ավագ ընկերները՝ նույն դպրոցի 3-րդ «Աստղիկներ» դասարանի աշակերտներն ու դասվար Տաթևիկ Աբրահամյանը:

Տարբեր դասարանների աշակերտների միասնությունը դարձավ իրական տոն՝ ամենամեծը հին ու նոր տոների մեջ, քանի որ արդեն գրել ու կարդալ գիտեն:

Գրերի գյուտից անցել են հազարավոր տարիներ, բայց եկող ամեն սերունդ յուրովի է արժևորում հայոց գրերի անհրաժեշտությունը՝ որպես ազգի ինքնության, հայրենիքի պաշտպանության կարևոր պայման: Փոքրիկների շուրթերին հայոց տառերն են, խոստումը Սուրբ Մաշտոցին՝ դու՝ հար ուսուցիչ, մենք հար աշակերտ:

6-ամյա փոքրիկները միջոցառման ավարտին հավաստիացրին՝ ունեն այն հստակ գիտակցումը, որ հայոց բառերը, գիրն ու հայրենին փոխել չի լինի և, խոնարհվելով իրենց մայրերի, ուսուցիչների առջև, խոստացան, որ ուր էլ լինեն, կպահպանեն և կպաշտպանեն մեսրոպատառ հայոց գիրը: Այդ խոստմանը հավատարիմ է նաև աշակերտների համադասարանցի Վարդանը, որն ընկերներին ու ուսուցչուհուն ողջունեց տեսակապով և խոստացավ՝ չնայած շուրջը չեն խոսում հայերեն, ինքը կխոսի և կգրի հարազատ լեզվով:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհավորեց ,ծիծեռնակներինե գրաճանաչության, իսկ ծնողներին՝ երեխաների դժվարին ու կարևորագույն փուլը հաղթահարելու համար և վստահեցրեց, որ դասվար Տաթևիկ Աբրահամյանի գաղափարների, քրտանաջան աշխատանքի արդյունքում ուրախանալու, հպարտանալու և հուզվելու բազմաթիվ առիթներ կլինեն:

Դասվար Տաթևիկ Աբրահամյանը հուզված է և հպարտ, որ ընդամենը մի քանի ամիս առաջ դպրոցի շեմից ներս մտած փոքրիկները ոչ միայն տառաճանաչ են, այլև գիտակցում են՝ հային հայ է պահում հայոց գիրը: Դասվարը վստահ է՝ փոքրիկները շատ լավ են գիտակցում իրենց առաքելությունը լեզվի պահպանության գործում. այդ են վկայում նրանց ոգևորությունն ու խոստումները, որ ամենուր բարձր են պահելու Սուրբ Մաշտոցի անունն ու հայոց գրերի զենքի պես կարևոր դերն ու նշանակությունը:

**Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ**

*Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալվարդ ՍԱՀԱԿՅԱՆ*

# ՔԱՅԼԵԼ ԿՅԱՆՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ

***-Կպատմե՞ք Ձեր մասին: Ի՞նչ նախասիրություններ ունեք:***

- Ես սովորել եմ Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների № 14 հատուկ դպրոցում: Ունեմ բազմաթիվ նախասիրություններ:

***- Կթվե՞ք դրանցից մի քանիսը:***

- Նախասիրություններս են սպորտը և երաժշտությունը, բայց սպորտով ինձ չի թույլատրվում կանոնավոր զբաղվել: Մտածում էի, թե կդառնամ դաշնակահար կամ երգչուհի, բայց վերջին տարում որոշեցի, որ պետք է փոխեմ մտադրությունս:

***- Իսկ նվագո՞ւմ եք:***

- Նվագում եմ դաշնամուր, բայց սիրողական մակարդակի:

***- Ի՞նչ մասնագիտություն եք ընտրել և ինչու՞ հենց դա:***

- Ընտրել եմ հատուկ մանկավարժության բաժիններից տիֆլոմանկավարժությունը, որն ուսումնասիրում է տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության հարցերը: Շատ եմ կարևորում այդ մասնագիտությունը, քանի որ ես ինքս էլ ունեմ այդ խնդիրը՝ նախընտրեցի այս մասնագիտությունը՝ ելնելով թե՛ այդ խնդրից, թե՛ հետագայում տեսողության խնդիր ունեցողներին օգնելու նպատակով, որպեսզի նրանք հեշտությամբ ինտեգրվեն և դառնան հասարակության լիարժեք անդամ:

***- Ո՞ր որակներն եք կարևորում մարդկանց մեջ:***

- Մարդու մեջ գնահատում եմ ազնվությունը, ճշմարտախոսությունը: Գնահատում եմ շատ բաներ, այդ թվում և ինքնավստահությունը: Բնականաբար, մարդկային բնավորության յուրաքանչյուր գիծ կարևոր է, բայց ինքնավստահությունն ամենակարևոր գործոնն է մարդու կյանքում. դու կարող ես լիարժեք քայլել ու կապ չունի՝ դու ունե՞ս ինչ-որ խնդիր, թե ոչ: Յուրաքանչյուր մարդ պետք է ինքնավստահություն ունենա:

***- Իսկ Ազատ ժամերին ինչո՞վ եք սիրում զբաղվել:***

- Ազատ ժամերին զբաղվում եմ YouTube-ով, նպատակ ունեմ հետագայում բացել YouTube-յան ալիք:

***- Ի՞նչ եք ցանկանում տեղադրել այդ ալիքում:***

- Ցանկանում եմ YouTube-յան ալիքով մարդկանց իրազեկել հաշմանդամություն ունեցող անձանց մասին, որպեսզի նրանք կարողանան քայլեն կյանքին ընդառաջ, հասկանան, որ կյանքը դեռ չի վերջացել, եթե իրենք ունեն ֆիզիկական կամ հոգեկան որևէ խնդիր: Նպատակս է հասարակության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անդամներին իրազեկել, որ հաշմանդամությունն ընդամենը խնդիր է, բայց մենք ունենք առանձնահատկություններ, որոնց օգնությամբ քայլում ենք կյանքին ընդառաջ:

***Զրուցեց***
***ՀՊՄՀ Անուշ ՄԵԼՈՅԱՆԸ***

# ԵԶԱԿԻ ՖՈՒՖԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 8-ն ամբողջ աշխարհում նշվում է որպես Կանանց միջազգային օր: Այս օրը համարվում է կանանց՝ հասարակության մեջ ունեցած դերի և իրավունքների համար անցյալում մղված պայքարի օր, որի հիմքը դրեցին ֆեմինիստ կանայք:

Առաջին պատմական իրադարձությունը կապված է 1857 թվականի մարտի 8-ի հետ, երբ Նյու Յորքի տեքստիլ գործարանների կին աշխատողներն իրենց իրավունքների պաշտպանության համար քայլերթով անցան քաղաքի փողոցներով: Պատճառը ցածր աշխատավարձն ու աշխատանքի վատ պայմաններն էին: Կես դար անց՝ 1908 թվականի նույն օրը, Նյու Յորքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ակտիվիստները կանանց իրավունքների պաշտպանության համար ցույց կազմակերպեցին:

Տոնի պատմությունն ավանդաբար կապվում է Կլարա Ցետկինի անվան հետ, ով ստեղծել էր կանանցից կազմած հեղափոխական ջոկատ: 1910 թվականին սոցիալիստական կուսակցության համագումարի ժամանակաընթացքում գերմանացի քաղաքական գործիչ Կլարա Ցետկինն է առաջարկել մարտի 8-ը հռչակել կանանց միջազգային տոն՝ ի պատիվ ողջ աշխարհի աշխատավոր կանանց:

Իսկ այսօր մարտի 8-ը նշվում է որպես կանանց սիրո և գեղեցկության օր:

ՀՊՄՀ թանգարանում Կանանց միջազգային օրվան նվիրված եզակի նամականիշերի ցուցադրություն է կազմակերպվել, ուր ներկայացված են ինչպես օտարազգի նշանավոր կանանց՝ Մերլին Մոնրոյին, Քեթրին Հեփբորնին, Ինդիրա Գանդիին, Եղիսաբեթ II-ին, Ուելսի արքայադուստր Դիանային, այնպես էլ հայազգի Լուսինե Զաքարյանին, Մարիետա Շահինյանին և այլ հայտնիների նվիրված նամականիշեր: Նաև ներկայացված են տարատեսակ ծաղիկների նամականիշեր և բացիկներ, որոնք համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Բաբախանյանի հավաքածուից են:

**Լիլիթ ՍԵՓՅԱՆ**
**Թանգարանի ավագ գիտաշխատող**

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 3.03. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ